ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/113

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ վիճակագրական կոմիտե
Մասնակից՝ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, համակարգչային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4096-2022 գրությամբ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վիճակագրական կոմիտեի 03.03.2022թ.-ի թիվ Ե/296-22 գրության հիման վրա, 10.03.2022թ.-ին «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.03.2022թ.-ին:

11.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/113 համարի ծածկագիրը:

17.03.2022թ.-ին, 25.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. <u>ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ վիճակագրական կոմիտեն 03.03.2022թ.-ի թիվ Ե/296-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Սույնով տեղեկացվում է Ձեզ առ այն, որ Վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 2022 թվականի փետրվարի 9-ին հայտարարվել է ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ: Ընթացակարգի շրջանակում 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ ՍՊԸ -ն (այսուհետ՝ Մասնակից), սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: 2022 թվականի փետրվարի 23-ին, սահմանված կարգով, մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի շտկվել: Մասնակիցը 2022 թվականի փետրվարի 24-ին ներկայացրել է բացատրական գրություն (կցվում է), որը գնահատող հանձնաժողովը չի համարել շտկում: Մասնակցի ներկայացրած հայտը մերժվել է, ինչը հանգեցրել է գնման գործընթացին նրա հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն, Ձեզ են ներկայացվում ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն ներկայացված մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) ներկայացուցիչ Հ. Օհանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ՍՑ-ԼՕ-2022/113 ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշման վերաբերյալ Վիճակագրական կոմիտեն սույնով ներկայացնում է իր դիրքորոշումը:

1. Վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) շրջանակում 4-րդ չափաբաժնի (գնման առարկան՝ կոունկածև պրոյեկտոր) մասով սահմանված տեխնիկական բնութագրում չկա կատարված հղում որևէ ապրանքային նշանի կամ մոդելի, ավելին՝ ի թիվս այլ պահանջների ներկայացված է նաև պրոյեկտորի վրա Wi-Fi լինելու պահանջը, ինչը բացակայում է Մասնակցի կողմից ենթադրյալ, հրավերով պահանջվող մոդելում /Canon LV-WX320/: Այսինքն Մասնակցի ենթադրությունը առ այն, որ Հրավերի 4-րդ չափաբաժնի համար սահմանված ապրանքը իր տեխնիկական բնութագրով լիովին համապատասխանում է Canon LV- WX320 մոդելի պրոյեկտորին, թյուր է:

Ուստի կարող ենք արձանագրել, որ նշված գնման առարկայի համար Հրավերի տեխնիկական բնութագրով չկա սահմանված որևէ հստակ մոդել, այլ նկարագրված են տվյալ ապրանքատեսակի համար անհրաժեշտ նվազագույն պարամետրերը՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված պահանջները:

2. Մասնակցի կողմից ընթացակարգի 4-րդ չափաբաժնի համար հայտով առաջարկվել է BenQ MW 560 մոդելի պրոյեկտորը: Հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է որոշակի անհամապատասխանություններ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի նկարագրի և տվյալ գնման առարկայի համար

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի միջև, մասնավորապես՝ անհրաժեշտություն է եղել հստակեցնելու առաջարկվող ապրանքի Ցուցադրման անկյունագծի չափը, անհրաժեշտ է եղել նաև տեղեկատվություն տրամադրել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԴիէմԱյ /HDMI/-ի տարբերակի մասին, ինչպես նաև առաջարկվող ապրանքի նկարագրում բացակայել են Լանի /Lan/, Վայ-Ֆայի /Wi-Fi/ առկայության վերաբերյալ նշագրումները:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 41-րդ, ինչպես նաև Հրավերի 8.11 կետերը՝ գնահատող հանձնաժողովը 23.02.2022թ. որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և Մասնակցին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը /տես ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության 13-րդ կետը/:

4. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը /23.02.2022թ./ դրա մասին eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվել են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Քանի որ eauction.armeps.am համակարգում քարտուղարի և գնահատող հանձնաժողովի անդամների էջերում մասնակիցների հայտերը վերջնական գնահատվելուց հետո հնարավոր չէ տեսնել շտկում կատարելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է, թե ոչ, ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով ընթացակարգի քարտուղարը դիմել է Ֆինանսների նախարարություն (կցվում է), և նրան տրամադրել են 23.02.2022թ. վերոնշյալ առաջարկը ուղարկված լինելու փաստը հավաստող էջի արտատպվածքը (կցվում է), ինչը վկայում է Մասնակցի պատշաճ ծանուցված լինելու մասին:

5. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել: Շտկման փոխարեն eauction.armeps.am համակարգով ներկայացվել է գրություն: Այնինչ նշված համակարգում հայտերի վերջնաժամկետը լրանալուց հետո մասնակիցների կողմից հնարավոր չէ նոր փաստաթղթի կցումը, եթե պատվիրատուները չեն տվել շտկման հնարավորություն, ինչը ևս մեկ անգամ վկայում է սույն դիրքորոշման 4-րդ կետով նկարագրված ծանուցումը ուղարկված լինելու մասին: Տվյալ դեպքում Մասնակիցը օգտվել է eauction.armeps.am համակարգում ներկայացված շտկման

առաջարկից, սակայն շփման փոխարեն կցել է գրություն բացատրություններով, թե ինչու է հայտով առաջարկվել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չունի Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող Լան /Lan/, Վայ-Ֆայ /Wi-Fi/, ինչպես նաև չի հստակեցվել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԳիէմԱյ /HDMI/-ի տարբերակը և Ցուցադրման անկյունագծի չափը, ուստի հանձնաժողովն արձանագրել է, որ առաջարկվող ապրանքի նկարագիրը չի համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և չի հանդիսացել պահանջվող ապրանքին «համարժեք»:»

3. <u>«Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4096-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ն 22.03.2022թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«09.02.2022թ.-ին ՀՀ Վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) էլեկտրոնային աճուրդի համակարգի՝ eauction.armeps.am (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով հայտարարել է թիվ ՀՀ-ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ): Ընկերությունը Աճուրդի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Նշյալ չափաբաժնում ներառված ապրանքը իր տեխնիկական բնութագրով համապատասխանում էր Canon LV-WX320 մոդելի պրոեկտորին, որն Աճուրդը հրապարակելու պահի դրությամբ չէր արտադրվում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընկերությունը 4-րդ չափաբաժնի մասով Աճուրդի շրջանակներում առաջարկել է մեկ այլ մոդելի պրոյեկտոր՝ BenQ MW 560: Արդյունքում՝ Պատվիրատուի կողմից Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում

արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին նկատմամբ: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումն Ընկերությունը էլեկտրոնային համակարգից չի ստացել:

09.02.2022թ.-ին Պատվիրատուն eauction.armeps.am համակարգի միջոցով հրապարակել է թիվ ՀՀ-ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Նշյալ չափաբաժնում ներառված ապրանքը իր տեխնիկական բնութագրով համապատասխանում էր Canon LV-WX320 մոդելի պրոեկտորին որն Աճուրդը հրապարակելու պահի դրությամբ չէր արտադրվում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընկերությունը 4-րդ չափաբաժնի մասով Աճուրդի շրջանակներում առաջարկել է մեկ այլ համարժեք մոդելի՝ BenQ MW 560 պրոյեկտոր:

Արդյունքում՝ Պատվիրատուի կողմից Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին նկատմամբ: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումն Ընկերությունը էլեկտրոնային համակարգից չի ստացել:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից 4-րդ չափաբաժնում ներառված գնման առարկան իր տեխնիկական բնութագրով համապատասխանում էր Canon LV-WX320 մոդելի պրոեկտորին, մինչդեռ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ավելին՝ Canon LV-WX320 մոդելի պրոեկտորն Աճուրդը հրապարակելու պահի դրությամբ չէր արտադրվում, ուստի հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընկերությունը 4-րդ չափաբաժնի մասով Աճուրդի շրջանակներում առաջարկել է մեկ այլ համարժեք մոդելի՝ BenQ MW 560 պրոյեկտոր, որը Պատվիրատուն գնահատել է անբավարար պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանվածին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18 թիվ 534-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով (այսուհետ՝ աճուրդ) գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017

թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով (այսուհետ՝ Կարգ) նախատեսված կարգավորումները:

Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Աճուրդի հրավերի 1-ին մասի 8.11 համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն-ներ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանու-թյունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանու-թյունները:

Վերոգրյալից հետևում է, եթե մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա պատվիրատուն անհամապատասխանու-թյունները արձանագրելու օրը ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխա-նությունները, ընդ որում պատվիրատուն ծանուցումը ուղարկում է մասնակցին eauction.armeps.am համակարգի միջոցով: ՈՒստի մասնակիցը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումը վերջինիս ուղարկվել է էլեկտրոնային համակարգից: Այսինքն, եթե ծանուցումը չի ուղարկվել eauction.armeps.am համակարգի միջոցով, ապա մասնակիցն այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում հայտը

օրենքով սահմանված ժամկետում շտկելու և պատվիրատուին ներկայացնելու պարտականություն մասնակցի մոտ չի կարող առաջանալ:

Ընդ որում հրավերով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը և հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության միջոց:

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ Հայտում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասնությունների վերաբերյալ Ընկերությունը էլեկտրոնային համակարգի միջոցով չի ծանուցվել, բացի այդ Գրավոր հիմքերում բացակայում անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումը eauction.armeps.am համակարգի միջոցով Ընկերությանն ուղարկելու վերաբերյալ փաստերը, ինչը ողջամտորեն ենթադրում է, որ այդ ծանուցումը Ընկերությանն էլեկտրոնային համակարգի միջոցով չի ուղարկվել: Ուստի կարող ենք փաստել, որ Հայտում արձանագրված անհամապատասխանությունների և դրանք օրենքով սահմանված ժամկետում շտկելու վերաբերյալ Ընկերությունը պատշաճ չի ծանուցվել, որտեղից էլ հետևում է, որ Ընկերությունը նշյալի վերաբերյալ համարվում է չծանուցված: Հետևաբար, նշյալ պայմաններում Հայտը օրենքով սահմանված ժամկետում շտկելու և Պատվիրատուին ներկայացնելու պարտականություններ Ընկերության մոտ չէր կարող առաջանալ, որպիսի հանգամանքներում մեր կարծիքով Ընկերությանը չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ Ընկերությունը Աճուրդի հրավերով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ինտ. Մենտաս Գրուպ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2022/113 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.02.2022թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

v. Արձանագրության 12-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի նկարագրում կան որոշակի անհամապատասխանություններ գնման առարկայի համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի հետ, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակեցնելու առաջարկվող ապրանքի Ցուցադրման անկյունագծի չափը, տեղեկատվություն տրամադրել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԴիէմԱյ /HDMI/-ի տարբերակի մասին, ինչպես նաև բնութագրում բացակայում է Լանի /Lan /, Վայ-Ֆայի /Wi-Fi/ առկայության վերաբերյալ նշագրումները:

vi. Արձանագրության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է Մասնակցի nerses.manukyan@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին:

viii. Արձանագրության 15-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել: Շտկման փոխարեն ներկայացվել է գրություն բացատրություններով, թե ինչու է հայտով առաջարկվել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:

ix. Արձանագրության 16-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չունի «ՀՀ ԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող Լան /Lan/, Վայ-Ֆայ /Wi-Fi/, ինչպես նաև չի հստակեցվել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԳիէմԱյ /HDMI/-ի տարբերակը և Ցուցադրման անկյունագծի չափը, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ առաջարկվող ապրանքի նկարագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և չի հանդիսանում պահանջվող ապրանքին «համարժեք», ինչից ելնելով որոշում է կայացվել Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և «ՀՀ ԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4096-2022 գրությամբ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի

ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ վիճակագրական կոմիտե-ի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն

սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2022թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետով արձանագրվել է, որ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Սակայն արձանագրության 12-րդ կետի համաձայն Մասնակցի կողմից 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի նկարագրում կան որոշակի անհամապատասխանություններ գնման առարկայի համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի հետ, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակեցնելու առաջարկվող ապրանքի Ցուցադրման անկյունագծի չափը, տեղեկատվություն տրամադրել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԴիէմԱյ /HDMI/-ի տարբերակի մասին, ինչպես նաև բնութագրում բացակայում

է Լանի /Lan /, Վայ-Ֆայի /Wi-Fi/ առկայության վերաբերյալ նշագրումները, ինչով պայմանավորված արձանագրության 13-րդ կետով որոշում է կայացվլ մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է Մասնակցի nerses.manukyan@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին: Սակայն Մասնակցի կողմից հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, այլ ներկայացվել է գրություն բացատրություններով: Արձանագրության 16-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չունի «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող Լան /Lan/, Վայ-Ֆայ /Wi-Fi/, ինչպես նաև չի հստակեցվել առաջարկվող ապրանքի վրա առկա էյչԳիէմԱյ /HDMI/-ի տարբերակը և Ցուցադրման անկյունագծի չափը, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ առաջարկվող ապրանքի նկարագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և չի հանդիսանում պահանջվող ապրանքին «համարժեք», ինչից ելնելով որոշում է կայացվել Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4096-2022 գրությամբ «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/113 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**